



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Մետրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի տնօրեն Արա Խզմայրյան
6 փետրվարի, 2025 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Օվսաննա Խաչատրյանի «Միջնադարյան գրական ժանրերը Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում» թեմայով Ժ.01.01- «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության վերաբերյալ:

Օվսաննա Խաչատրյանն իր առաջ հետաքրքիր խնդիր է դրել՝ միջնադարյան հայ գրականության գանձարանում, որը հիմնականում ձևավորվել և զարգացել է ավանդական ու կանոնական հունով, առանձնացնել և ցույց տալ գեղարվեստական արժեք ունեցող մի քանի «փոքր» ժանր՝ հանելուկ, կաֆա, հիշատակարան և գրառաջք: Նա կենտրոնացել է այդ ժանրերի դեռևս չուսումնասիրված դրսևորումների ու առանձնահատկությունների վրա՝ տալով դրանց համակողմանի քննություն:

Աշխատանքն աչքի է ընկնում մեծաքանակ ձեռագրերի ընդգրկմամբ: Ուսումնասիրողը ձեռագրագետ է, զբաղվում է ձեռագրերի նկարագրությամբ, ուստի նրա դիտարկումները խիստ առարկայական են: Աշխատանքում ջանասիրաբար քննվում են բազմաթիվ չիրատարակված (կամ միայն ձեռագրացուցակներում հրատարակված, ուստի քիչ ընթերցվող) բնագրեր, այսինքն աշխատանքը նաև թարմ տեղեկությունների աղբյուր է: Ատենախոսության բնույթը մեծ մասամբ ձեռագրագիտական-բանասիրական է, այն տեղեկատվական լավ հիմք կարող է ծառայել հետագա՝ գրականագիտական ուսումնասիրությունների համար:

Չնայած ատենախոսության վերնագրում ժամանակային սահմանափակում կա՝ «ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում», անհրաժեշտության դեպքում հեղինակը դուրս է եկել այդ սահմաններից՝ անդրադառնալով օրինակ, ԺԶ և ԺԷ դարերում գրված ձեռագրերի: Վերնագրում կա նաև մեկ այլ սահմանափակում՝ «Մաշտոցի անվան Մատենադարանի», սակայն ատենախոսն օրինակներ է բերել նաև Վենետիկի, Երուսաղեմի (այստեղ նրան օգնել է Նորայր Պողարյանի մանրամասն ձեռագրացուցակը), ու Զմմառի ձեռագրերից:

Բոլոր բերվող օրինակները ճշգրիտ հասցեագրված են, նշված են ձեռագրի համարն ու էջը: Մյուս կողմից ատենախոսությունը գերծ է ձեռագրագետներին երբեմն բնորոշ այն թերությունից, որ, այս կամ այն ձեռագրի մասին խոսելիս, բերում են ձեռագրացուցակներից քաղված բոլոր տեղեկությունները, ինչը ծանրաբեռնում և խճողում է շարադրանքը: Օվսաննա Խաչատրյանը ձեռագրագիտական տվյալները բերել է ըստ անհրաժեշտության՝ կոնկրետ խնդիրներ լուսաբանելու նպատակով:

Ատենախոսը ծանոթ է իր ուսումնասիրած ժանրերին նվիրված տարբեր լեզուներով գրականությանը և տեղին է ներկայացնում այլ հեղինակների կարծիքները՝ զուգակցելով և լրացնելով դրանք իր դիտարկումներով:

Գիտական նորոյթի տեսանկյունից ուշագրավ է աշխատանքի առաջին գլուխը, որտեղ որոշ նորություններ բերվում են Հայսմավուրքներում հանելուկների ընդգրկման ավանդույթի վերաբերյալ դիտարկումներով:

Ատենախոսը հատկապես մանրամասն է անդրադարձել Հայագիտության մեջ քիչ ուսումնասիրված «գրառաջք» ժանրին: Նա քննել է 12 ձեռագիր, որոնք փաստորեն գրառաջքների նմուշ-կաղապարներ են պարունակում, և որոնցում հասցեատիրոջ անվան տեղում գրված է «այս անուն» կամ «ով որ լինի»: Ժանրի փոքրածավալ և, ինչպես ատենախոսն է բնորոշում, «ոչ ինքնուրույն-կախյալ» բնույթ ունեցող բնագրերը դժվար թե նպատակահարմար լինեն հրատարակել առանձին գրքով, ուստի այսօրինակ ուսումնասիրությունը նաև լավ առիթ է՝ ընթերցողին ներկայացնելու ձեռագրերում թաքնված այդ ուրույն գրվածքները:

Աշխատանքի հաջողված մասնավոր հատվածներից նշենք նաև կաղապարային հիշատակարանների ուշագրավ երևույթը լուսաբանող օրինակը: Նման հիշատակարաններ համադրելու արդյունքում Օվսաննային հաջողվել է պարզել, որ ՄՄ 8578 ձեռագրի գրիչը մի շարք այլ ձեռագրերում հիշատակվող Սարգիս Հիզանցին է, ընդօրինակության վայրն էլ հավանաբար Ավրնդանց գյուղն է, իսկ վստահաբար՝ Վան նահանգի Մոկս գավառը: Հետաքրքրական են հուշադրյուրի կամ գավաթի վրա գրելու գրելու՝ ատենախոսի գտած օրինակները, որոնք նա դասում է կաղապարային արձանագրություն-հիշատակարանների (գուցե ավելի դիպուկ կլիներ՝ մակագրություն-հիշատակարանների) շարքում: Կարևոր են հեղինակային և նախագաղափար հիշատակարանների մասին դատողությունները և բերված օրինակները:

Աշխատության չորրորդ գլուխը թեև ընդհանուր տեղեկատվական է, սակայն ուսումնասիրողների համար պիտանի տվյալներ է պարունակում այն մասին, թե Մատենադարանի ԺԲ-ԺԵ դարերի որ ձեռագրերում կան պատմագրական երկեր, վարքեր ու վկայաբանություններ, թղթեր, շարականներ, ներբողներ, տաղեր ու

գանձեր, առակներ և, ի վերջո, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, ընդամենը՝ շուրջ 400 ձեռագիր:

Օվսաննա Խաչատրյանի ատենախոսությունը հաջողված բանասիրական աշխատանք է, որը նաև գրված է աշխույժ ոճով, և ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն ավելի կատարյալ տեսնելու նպատակով նշենք մի քանի դիտողություն և ցանկություն:

1. Գանձերին կցված կաֆաների հեղինակներին թվարկելուց հետո Օվսաննա Խաչատրյանն ավելացնում է. «որոնց հեղինակած կաֆաներն ունեն աղբյուրագիտական և ոչ պակաս գեղարվեստական արժեք»: Եթե աղբյուրագիտական արժեքն անուրանալի է, քանի որ դրանք պարունակում են այլևայլ տեղեկություններ, անգամ երբեմն՝ գրության թվականը, ապա գեղարվեստական արժեքը փոքր-ինչ չափազանցված է: Կաֆաները հաճախ միօրինակ բովանդակություն ունեն՝ պայմանավորված մասնավորապես ծայրակապով և միահանգ գրված լինելու հանգամանքով, ինչը սահմանափակել է հեղինակներին ու պատճառ դարձել լեզվական անհարթությունների:

2. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ժանրային պատկանելության հարցին անդրադառնալիս Օվսաննա Խաչատրյանը եղած տարբեր կարծիքները բերում է մասնակիորեն, բավարարվում ընդհանուր բնութագրումներով, որոշ դեպքերում ոչ ճիշտ մեկնաբանում մեջբերված հատվածները, օրինակ՝ Հրաչյա Թամրազյանի ուսումնասիրությունից արված մեջբերման դեպքում:

3. Հանելուկներին ատենախոսն անդրադարձել է միայն Հայսմավուրքների կազմում, թեև դրանք փոխանցվել են նաև նշված դարաշրջանում ստեղծված այլ ժողովածուների միջոցով: Հասկանալի չէ, թե ինչով է պայմանավորված այդ սահմանափակումը:

4. Չորրորդ գլխում ներկայացված ժանրերի բնութագրումները հանրագիտարանային բնույթ են կրում: Այստեղ անհրաժեշտ էր անդրադառնալ Աելիտա Դոլուխանյանի աշխատությանը նախորդած այլ նշանակալի ուսումնասիրությունների և տալ ժանրերի առանձնահատկությունների ավելի խոր ու ինքնուրույն վերլուծություն:

5. «Յայսմաւուրք» եզրը բացատրելիս՝ հեղինակը գրում է. «Միջազգային ժողովածուի հայկական անունը ծագել է...» և այլն: Այստեղ լավ կլիներ տալ միջազգային, ավելի կոնկրետ՝ հունական ժողովածուի Synaxarium/Synaxarium անունը:

6. Կիրառված է մերթ «ագիոգրաֆիա», մերթ «հագիոգրաֆիա» եզրը: Նախընտրելի է երկրորդը:

7. Մեջբերված բառերը, օրինակ՝ գրիչների ինքնանվաստացնող բնորոշումները կամ ծածկագրերի անվանումները, լավ կլինեն ներկայացնել չակերտների մեջ:

8. Եթե գրական երևույթների մասին խոսքում հղվում են «Հայ ժողովրդի պատմության» այսինչ հատորն ու էջը, ցանկալի կլինեն, որ նշվեն գրականությանը նվիրված հոդվածի վերնագիրն ու հեղինակի անունը:

9. Ատենախոսը գրում է. «...որոշ ուսումնասիրողներ հիշատակարանների փառքի հատվածները համարել են որակ չկազմող և արժեք չունեցող գրություններ» և արդարացիորեն առարկում է այդ կարծիքին: Կարելի էր նշել, որ հիշատակարանների հատորները հրատարակվել են հիմնականում խորհրդային կարգերի օրոք, երբ նման թեմատիկա չէր խրախուսվում, ուստի դրանք կազմողները պարտադրված են եղել զանց առնելու նման հատվածները:

10. Էջ 105-ում կարդում ենք. «հանգավոր պոեզիան առաջացել է միջին դարերում, անտիկ գրականության մեջ այն չի եղել. Նարեկացու պոեզիայում արդեն եղել են հանգի առածին տարրեր, իսկ Ներսես Շնորհալին և Ֆրիկը գրել են հանգավոր տողերով»: Սա ճիշտ է, պարզապես Ներսես Շնորհալուց առաջ արժեր հիշատակել Գրիգոր Մագիստոսին, որն իր «Հազարատողյան», իսկ ավելի ճշգրիտ վերնագրով՝ «Տաղասացութիւն» պոեմը շարադրել է միահանգ՝ «-ին» հանգով: Այդպես նաև այլ չափածո գործեր:

11. 1023 (ՆՀԲ) թվականի հիշատակարանը Ներսես Շնորհալուն (1102-1173) վերագրելը շփոթմունքի արդյունք է, որը թերևս առկա է եղել Արտաշես Մաթևոսյանի գրքում:

12. Առակներին նվիրված գրականությունը վկայակոչելիս ճիշտ կլինեն հիշատակել նաև Օլգա Վարդազարյանի՝ Մխիթար Գոշի առակների համար գրած առաջաբանը «Մատենագիրք հայոց»-ի Ի հատորում:

13. Ցանկալի կլինեն, որ աշխատանքում գոնե մի ընդհանուր անդրադարձ արվեր քննվող ժանրերի երկերի լեզվական առանձնահատկություններին:

14. Շարադրանքի ոճը հղկելու նպատակով նշենք, որ «Հիշատակարանի ժանրային առանձնահատկությունների վերհանումը՝ որպես ... գրականության մեջ իր ուրույն տեղը ունեցող ժանր» տիպի արտահայտության մեջ (էլի կան նման դեպքեր) պիտի լինի «ժանրի»:

15. Շարադրանքում առկա են վրիպակներ, այդ թվում՝ կետադրական անկանոնություններ, որոնք արժե ուղղել. օրինակ՝ էջ 71. «Այսիսով պարզվում է, ՄՄ Հմր 3633 ձեռագիրը գրված է 1655 թվականին...» (ստորակետի փոխարեն պետք է բույթ լինի), էջ 88. «Այսինքն՝ թղթառաջքը, որպես կայուն նամակագրական միավոր, նպատակ ունի...» («միավոր» բառից հետո պետք է ստորակետ ավելացնել): «Յորբելեն» գրաբարյան բառը, «յորբելեան»-ի փոխարեն, հավանաբար վրիպակ է:

